

ՆՈՐ ԱՂԱՆԴ ԱՅՆԹԱՊՈՒՄ

Կ. Պօլսի հալ լրագիրները հաղորդեցին մի անախորժ լուր, որ կիլիկիակի Անթապ քաղաքում Փէլիսպսս անունով մէկը ակոնել է հալերի մէջ մի նոր աղանդ տարածել. Դժբաղդաբար լրագրների հաղորդածը միան մի չոր ու ցամաք լուր է և չէ երնում թէ ինչում է կալանում ալդ աղանդը և կամ Բնչ շարժառափթներից ստիպուած առաջ է եկել կրօնամոլութեան ալդ նոր հոսանքը, որ նպատակ ունի հալ ժողովրդին հոռացնել իւր հալքնի քաղմաշարչար եկեղեցուց և խոտութիւն սերմաննել խաղաղասէր մի ժողովրդի կեանքի մէջ.

Նոյն լրագիրներում ապուած է նաև Կ. Պօլսի ամենապատիւ Պատրիարքի Կոնդակը Անթապի հոգեորական դասին և ժողովրդին ուզգուած, որով լորդորում է զգոլշ կենալ ալդ ինքնակոչ քարոզողներից, որոնք ուս. Եկեղեցուն մէջ երենալու ալ լանդուած, են, քանի որ «հալ եկեղեցուոյ սիրելի զաւակունք պէտք չունին մեր եկեղեցուոյ ողուն հակառակ և ճշմարիտ քրիստոնէութեան և ողջամիտ վարդապետութեան ներհակ օտարուսում խօսքեր լսելու»:

Հաւ ժողովրդին հերիք չէր իւր անախսական և ալ հոգսերը, հերիք չէր րողոքական և կաթոլիկ քարոզիչների չնորհիւ սերմանած ընտանեկան պառակտումներն ու քալքարումը, ալո նորաբոս աղանդն էլ մի նոր ցաւ է նորա համար Բալց հետաքրքիր է իմանալ թէ Բնչ սղանդ է ալդ և որտեղից է մտել. Անշուշտ ալս մասին աւելի մանրամասն տեղեկութիւններ կարդանք Կ. Պօլսի թերթերում:

ՄԱՐՏԻՆԻԿ ԿՂԶՈՒ ԱՀՈՒԵԼԻ ԱՂԵՑԸ

Վեզուվի հրաբուղիսի ժալթքելուց լետոյ, որ 79 թ. կործանեց Հերկուլան և Պօմպէլ քաղաքները, քաղաքակրթուած մարդկութիւնը դեռ չէ տեսել արդախիս սարսափելի արհաւիրք որ ալժմ կործանեց Ս. Պիէր քաղաքը. Արդէն 50 ապրի է, որ մարել էր Mont Pele հրաբուղիսը և կղզու բնակիչներն արդէն մոռացել էին վտանգը և ահա տասնեակ հաղար մարդիկ լանկարձ զոհուեցին ալդ անսպասելի վտանգին.

Կործանումից մի քանի օր առաջ արդէն երեացել էին մերձեցող դժբաղդութեան նշանները. և լերան ստորոտի բնակիչները փախչում են Ս. Պիէր քաղաքը:

Մարտինիկ կղզին գտնում է Դօմինիկա ու Սանտա-Լիւղիա կղզիների մէջ և Գվադլուպից լետոյ Փրանսիական Ալէստինդիայի ամենամեծ կղզին է.

Մօստ Պէլէ հրաբուղիսի քարձրութիւնն է 1,350 մետր. Ալս սարի ստորոտում է գտնում Սէն-Պիէր քաղաքը՝ գեղե-

ցիկ հասարակական շէնքերով, թատրոնով և բուսաբանական ալդիով. Մարտինիկ կղզու բնակչիչների թիւը հաշում էր մօտ 180 հազար, որոնցից սպիտակամորթների թիւը հասնում է 10 հազարի:

Մարտինիկ կղզին գտաւ Կոլու մրոսը 1502 թ. իսկ ֆրանսիայի դադիվականները դրաւեցին 1635 թ.։ Տասնեռութերորդ դարում անգլիացիք թէն 3 անգամ գլաւել են ալդ կղզին, սակայն կրկին լսու են դարձել ֆրանսիակին:

Սէն-Պիէր քաղաքը ամրողջովին կործ անունց մալիսի 8-ին, առաւ օտենա 8 ժամին. Պէլէ հարբուղիսց ժալթքած լաւալի հոսանքներ և հրալին անձրես մի քանի բոպէում քաղաքը դարձնում են հրալին ծովլ բռնելով նաև քաղաքի շըրջակալքը։ Մօտ 5000 մարդ նաւերով փախչում հն Փօրտ-զըրֆրանսու Ամբողջ քաղաքը ծածկուած է դիակներով, որոնց արում են, որպէս զի վարակիչ հիւանդութիւններ չտարածուեն։ Ամբողջ կղզու վլալ տեղում է տաք մոխրի անձրես, որոնք անապատ են դարձնում ամեն ինչ։ Լաւալի հոսանքը հսօել է մինչև Կարրէ. բացի Սէն-Պիէրից ոչնչացել են դարձեալ երեք նշանաւոր գաղթավայրեր։ Փալթքուսը դեռ շարունակում է և չի կարելի ասել՝ թէ երբ կվեճանալը Հաղորդում են, որ իբրև թէ հրաբուղին Մօնտ-Պէլէն, որ 1380 մետր բարձրութիւն ուներ, ալժմ ցածրացել է մինչև 450 մետրի։ Կղզու մակերեսը. թը բաւականին փոխուել է. առաջացել են հովիտների Բնակչութեան սարսափանար փախչում են ուր կարող են, հարեան կղզիները. շատերը ֆրանսիա են դալիս։

Կ. ՊՈԼՍԻ ԹԱՂԱՑԻՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԴԻՐ

Մեղ ուղարկուած է Կ. Պոլսի Պատրիարքարանից թաղա. վին վարժարանների վիճակացոյցը առ 1 լուսուարի 1902 ամի, որից քաղում ենք հետեւեալ տնղեկութիւնները։

Կ. Պոլսում ներկալումա կայ 40 հազ ուսումնարան երկու սեռի, որոնցում ուսանում են 5376 հոգի, սոցանից՝ ծաղկոց. ներում 1170 տղալ և 965 աղջիկ, և տարրական նախակրթա. րաններում (6 տարուակ դասընթացով) 2018 տղալ և 1223 աղջիկ։

Ալդ գպրոցներում դասս խօսում են 188 ուսուցիչ և 110 ուսուցչուհի։

Ամսական եկամուտ ունին՝ եկեղեցիներից՝ 51,599 դրաւ, աշակերտների թոշակներից՝ 26,097 դ. և նուէրներ՝ 5790 դ. — ընդամենը 83,486 դրուշ և նունքան էլ ծախք։

Բացի սոցանից՝ Մալրաքաղաքի Պետական և ալլ ու. սումնարաններում ուսանում են 1823 հոգի՝ հետեւեալ ստորաբաժանմամբ. Պետական վարժարաններում՝ 220 տղալ։ Մա-